Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
հուլիսի 19-ի N 822 - Լ որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ 2018 - 2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Կատարման ժամկետը | Պատասխանատու մարմինը | Ֆինանսավորման աղբյուրը | Ակնկալվող արդյունքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | ԳԼՈՒԽ 1.<br>ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | | | | |
| 1. | Պետական իշխանության լիազոր մարմինների կողմից անդրսահմանային տարածքային համագործակցության հարցերով հանդիպումների անցկացում | 2018-2020 թթ. | նախարարություններ<br><br>ՀՀ կառավարությանը, ՀՀ վարչապետին և նախարարություններին ենթակա մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | անդրսահմանային տարածքային համագործակցության հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրի միջոցառումների իրականացման առկա վիճակի վերհանում |
| 2. | Անդրսահմանային տարածքային համագործակցության հեռանկարային զարգացման պետական և տարածա-շրջանային ծրագրերի մշակում | 2018-2020 թթ. | նախարարություններ<br><br>ՀՀ կառավարությանը, ՀՀ վարչապետին և նախարարություններին ենթակա մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | անդրսահմանային տարածքային համագործակցության զարգացում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| ԳԼՈՒԽ 2.<br>ՄԻՋՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ, ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԵՎ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ | | | | | |
| 3. | Միջտարածաշրջանային և ապա-կենտրոնացված համագործակցությանը նվիրված համաժողովների անցկացում | 2018-2020 թթ. | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | միջտարածաշրջանային և ապա-կենտրոնացված համագործակցության ակտիվացում |
| 4. | ՀՀ-ի և ՌԴ-ի միջև տնտեսական համա-գործակցության միջկառավարական հանձնաժողովի հայ-ռուսական միջ-տարածաշրջանային համագործակցու-թյան համատեղ աշխատանքային խմբի նիստերի անցկացում | 2018-2020 թթ. | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության ակտիվացում |
| 5. | Միջտարածաշրջանային, ապակենտրո-նացված և անդրսահմանային միջազ-գային համաժողովներին պաշտո-նական պատվիրակությունների մասնակցության ապահովում | 2018-2020 թթ. | նախարարություններ<br><br>ՀՀ կառավարությանը, ՀՀ վարչապետին և նախարարություններին ենթակա մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | միջտարածաշրջանային և ապա-կենտրոնացված համագործակցության հարթակներում պատշաճ ներգրավում |
| 6. | Անդրսահմանային և միջտարա-ծաշրջանային համագործակցության զարգացման խթանում | 2018-2020 թթ. | ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | անդրսահմանային և միջտարածա-շրջանային համագործակցության զարգացում |
| 7. | Անդրսահմանային, միջտարածաշրջա-նային, ապակենտրոնացված համա-գործակցության նորմատիվ-իրավական բազայի կատարելագործում | 2018-2020 թթ. | ՀՀ տարածքային կառա-վարման և զարգացման նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | անդրսահմանային, միջտարածաշրջա-նային, ապակենտրոնացված համա-գործակցության մասին տեղե-կատվության ամբողջական արտացոլում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| ԳԼՈՒԽ 3.<br>ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ<br>ԱՐՏԱԴՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ | | | | | |
| 8. | Աջակցություն համատեղ ձեռնարկու-թյունների և ֆինանսաարդյունաբե-րական խմբերի ստեղծմանը | 2018-2020 թթ. | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | անդրսահմանային տարածքներում համատեղ ձեռնարկությունների և ֆինանսաարդյունաբերական խմբերի թվի ավելացում |
| 9. | Համագործակցող վարչատարածքային միավորներում քիչ քանակությամբ արտադրված կամ չարտադրվող ապ-րանքների մասին տեղեկատվության փոխանակում՝ տվյալ ցանկերում առկա ապրանքի հնարավոր փոխադարձ մատակարարումները կազմակերպելու համար | 2018-2020 թթ. | ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | փոխադարձ մատակարարումների նպատակային իրականացում |
| 10. | Համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում իրա-կանացվող հնարավոր ներդրումային նախագծերի, տարածքներում գործող ներդրողների համար հարկային արտո-նությունների և նախապատվություն-ների մասին տեղեկատվության փոխանակման կազմակերպում | 2018-2020 թթ. | ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | հարկային արտոնությունների և նախապատվությունների մասին ամբողջական տեղեկատվության ապահովում |
| 11. | Անդրսահմանային և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների հիմնում | 2018-2020 թթ. | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | անդրսահմանային տարածքներում ներդրումների ծավալի ավելացում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| ԳԼՈՒԽ 4.<br>ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ | | | | | |
| 12. | Աջակցություն սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորներին՝ ագրոպարենային համակարգի զարգացման համատեղ ծրագրերի և նախագծերի իրականացման, դրանց մասնակցության ու փորձի փոխանակման գործում | 2018-2020 թթ. | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ագրոպարենային համակարգի զարգացում |
| 13. | Միջտարածաշրջանային և սահմանամերձ տարածքներում անասնաբուժական ծրագրերի համատեղ իրականացում՝ հատկապես վտանգավոր կենդանական հիվանդությունների ներթափանցման կանխարգելման նպատակով | 2018-2020 թթ. | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | հիվանդությունների ներթափանցման կանխարգելման որակի բարձրացում |
| 14. | Աջակցություն գինեգործական արտադրանքի և ալկոհոլային խմիչքների արտադրության, ներմուծման և արտահանման գործընթացները կանոնակարգող՝ համագործակցող երկրների օրենսդրական դաշտերի մասին տեղեկատվության փոխանակմանը | 2018-2020 թթ. | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | գյուղատնտեսական համագործակցության ակտիվացում |
| 15. | Սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում ագրոպարենային արտադրանքի արտադրությամբ ու վաճառքով զբաղվող՝ փոխադարձ առևտրով շահագրգռված ձեռնարկությունների ցանկի փոխանակում | 2018-2020 թթ. | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | տնտեսավարող սուբյեկտների միջև կապերի ակտիվացում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 16. | Սահմանամերձ տարածքների և համագործակցող վարչատարածքային միավորների տնտեսավարող սուբյեկտների համար՝ բուսաբուծության և վնասատուների դեմ բույսերի պաշտպանության, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների զարգացման և իրականացման ոլորտում ձեռք բերված նվաճումների մասին տեղեկատվության փոխանակման կազմակերպում | 2018-2020 թթ. | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | տնտեսավարող սուբյեկտների միջև կապերի ակտիվացում |
| 17. | Սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում ոչխարաբուծության, տավարաբուծության (հատկապես մսատու ցեղատեսակների) և մեղվաբուծության զարգացմանն ուղղված համագործակցության, ներդրումների կամ համատեղ ձեռնարկությունների ստեղծման հնարավորության քննարկում | 2018-2020 թթ. | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | տնտեսավարող սուբյեկտների միջև կապերի ակտիվացում |
| 18. | Համագործակցող վարչատարածքային միավորների տնտեսավարող սուբյեկտների մասնակցության ապահովում արժեքավոր ձկնատեսակների բուծման և թռչնաբուծության ներդրումային ծրագրերում | 2018-2020 թթ. | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | տնտեսավարող սուբյեկտների մասնակցության աճ |
| 19. | Սահմանամերձ տարածքներում կենդանիների հիվանդությունների և բույսերի վնասատուների ներթափանցման կանխարգելման ու վերացման համատեղ դաշտային զորավարժությունների կազմակերպում և անցկացում | 2018-2020 թթ. | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | հիվանդությունների ներթափանցման կանխարգելման և վերացման աշխատանքների բարելավում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| ԳԼՈՒԽ 5.<br>ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՈԼՈՐՏՈՒՄ | | | | | |
| 20. | Աջակցություն սահմանամերձ տարածքներում բոլոր տեսակների բեռնափոխադրող, ուղևորափոխադրող տրանսպորտային միջոցների համար առանց խոչընդոտների գործունեության անհրաժեշտ պայմանների ստեղծմանը՝ ներառյալ տարանցիկ փոխադրումները | 2018-2020 թթ. | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | բեռնափոխադրող, ուղևորափոխադրող տրանսպորտային միջոցների աշխատանքների բարելավում |
| 21. | Տրանսպորտային ծառայության, տրանսպորտային հաղորդակցության և ենթակառուցվածքների շուկայի զարգացման համատեղ աշխատանքների իրականացում | 2018-2020 թթ. | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | տրանսպորտային ծառայության, տրանսպորտային հաղորդակցության և ենթակառուցվածքների շուկայի զարգացում |
| 22. | Տրանսպորտային հաղորդակցության բարելավում, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների նախագծերի համաձայնեցում և փոխադարձ մասնակցություն | 2018-2020 թթ. | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | տրանսպորտային ծառայության, տրանսպորտային հաղորդակցության և ենթակառուցվածքների շուկայի զարգացում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 23. | Աջակցություն տրանսպորտային ենթակառուցվածքների արդյունավետ օգտագործմանը՝ տարբեր տեսակների տրանսպորտային միջոցների գործունեության համակարգման և նրանց զարգացման գրավիչ ներդրումային նախագծերի հաշվին | 2018-2020 թթ. | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | տրանսպորտային ծառայության, տրանսպորտային հաղորդակցության և ենթակառուցվածքների շուկայի զարգացում |
| 24. | Կապի ծառայության շուկայի զարգացման գործում աշխատանքների իրականացում | 2018-2020 թթ. | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | շարժական կապի և թվային վերգետնյա հեռուստահեռարձակման համակարգերում որոշակի հաճախականային տիրույթներում վնասակար խանգարումների նվազեցման աշխատանքների իրականացում |
| 25. | Սահմանային տարածքներում էլեկտրոնային կառավարման համակարգերի զարգացման փորձի փոխանակում | 2018-2020 թթ. | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | կապի ծառայության շուկայի զարգացում |
| 26. | Սահմանամերձ տեղեկատվական կենտրոնների փոխգործակցության զարգացում | 2018-2020 թթ. | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | տեղեկատվական կենտրոնների աշխատանքների բարելավում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| ԳԼՈՒԽ 6.<br>ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ | | | | | |
| 27. | Վերականգնվող էներգիայի աղբյուր-ների, այդ թվում՝ արևային, քամու և ջրի էներգիայի օգտագործման զար-գացման ու էներգաարդյունավետու-թյան բարձրացման աշխատանքների կազմակերպման փորձի փոխանակում | 2018-2020 թթ. | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | վերականգնվող էներգիայի աղբյուր-ների օգտագործման ու էներգա-արդյունավետության բարձրացման աշխատանքների բարելավում |
| 28. | Բնապահպանական հարցերին նվիր-ված համաժողովների, գիտաժողով-ների, ցուցահանդեսների կազմա-կերպում | 2018-2020 թթ. | ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | բնապահպանության ոլորտի սուբյեկտ-ների միջև կապերի ակտիվացում |
| 29. | Սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում տնտեսական գոր-ծունեության կարգավորման, արտադրա-կան թափոնների կառավարման ու տնտեսական գործունեության ընթաց-քում տարատեսակ վնասակար նյութերի օգտագործման նկատմամբ համատեղ վերահսկողության իրականացում | 2018-2020 թթ. | ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում տնտեսական գործունեության նկատմամբ իրակա-նացվող վերահսկողության որակի բարձրացում |
| 30. | Սահմանամերձ տարածքներում միասնական բնապահպանական գոտիների և այգիների ստեղծում | 2018-2020 թթ. | ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | բնապահպանական գոտիների և այգիների թվի ավելացում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 31. | Սահմանամերձ տարածքներում բնապահպանական վերահսկման և բնական ու տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման նպատակով համատեղ զորավարժությունների անցկացում | 2018-2020 թթ. | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | արտակարգ իրավիճակների կանխարգելման աշխատանքների որակի բարձրացում |
| 32. | Համաձայնեցված բնապահպանական վերահսկման և բնական ու տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման նպատակով մասնագետների խմբերի ու տրանսպորտային միջոցների՝ ազգային օրենսդրության կամ միջազգային պայմանագրերի համաձայն պետական սահմանների հատմանն աջակցություն | 2018-2020 թթ. | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br><br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման աշխատանքների որակի բարձրացում |
| 33. | Սահմանամերձ տարածքներում բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման ու հետևանքների վերացման գործում տեղեկատվության և օգնության տրամադրման կազմակերպում | 2018-2020 թթ. | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br><br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման ու հետևանքների վերացման աշխատանքների որակի բարձրացում |
| 34. | Գիտատեխնիկական տեղեկատվության փոխանակում, արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ոլորտում համատեղ հետազոտական նախագծերի ու ծրագրերի մշակում և իրականացում | 2018-2020 թթ. | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման աշխատանքների որակի բարձրացում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 35. | Սահմանամերձ տարածքներում բնապահպանությանը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված միասնական քաղաքականության մշակում | 2018-2020 թթ. | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն<br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում |
| ԳԼՈՒԽ 7.<br>ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ | | | | | |
| 36. | Համատեղ հետազոտական ծրագրերի և նախագծերի մշակում ու իրականացում կրթության և գիտության բնագավառում | 2018-2020 թթ. | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ մարզպետարաններ<br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | կրթության և գիտության ոլորտում փոխգործակցության ամրապնդում |
| 37. | Բոլոր տեսակի երիտասարդական փոխանակումներին և միջազգային նախագծերին աջակցելը, ինչպես նաև երիտասարդության հարցերին ուղղված միջազգային նախագծերի և ծրագրերի իրականացմանը սահմանամերձ տարածքների և համագործակցող վարչատարածքային միավորների տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունն ապահովելը | 2018-2020 թթ. | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>ՀՀ մարզպետարաններ<br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | երիտասարդական համագործակցության ոլորտում կապերի ակտիվացում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 38. | Նորարարական գործունեության տարածմանը նպաստելը, ժամանակակից գիտական և տեխնոլոգիական գիտելիքների, ինչպես նաև հմտությունների տարածմանը՝ սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում | 2018-2020 թթ. | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | գիտության ոլորտում համագործակցության ակտիվացում |
| 39. | Համագործակցող վարչատարածքային միավորների և սահմանամերձ տարածքներում ազգային ու մշակութային տոների, ցուցահանդեսների, համատեղ փառատոների, մրցույթների, համաժողովների կազմակերպմանն աջակցություն | 2018-2020 թթ. | ՀՀ մշակույթի նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | մշակութային կապերի ակտիվացում |
| 40. | Սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքների տեղեկատվական փոխգործակցության և սոցիալ-տնտեսական զարգացման գիտահետազոտական աշխատանքների իրականացում | 2018-2020 թթ. | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | գիտության ոլորտում համագործակցության ակտիվացում |
| 41. | Սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում գտնվող կրթական հաստատությունների կրթության համակարգի բարելավմանն ուղղված համագործակցություն և փորձի փոխանակում | 2018-2020 թթ. | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | կրթական հաստատությունների, կրթության համակարգի բարելավում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 42. | Սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում գործող ստեղծագործական խմբերի հյուրախաղերի կազմակերպման և այդ խմբերի, անհատ կատարողների՝ փառատոներին, մրցույթներին և այլ մշակութային միջոցառումներին մասնակցությանն աջակցություն | 2018-2020 թթ. | ՀՀ մշակույթի նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | մշակութային կապերի ակտիվացում |
| 43. | Սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում գործող մշակութային հաստատությունների միջև ուղղակի շփումների հաստատման նպաստում | 2018-2020 թթ. | ՀՀ մշակույթի նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | մշակութային հաստատությունների միջև կապերի ակտիվացում |
| 44. | Համագործակցող վարչատարածքային միավորների տարածքում անցկացվող միջազգային բնույթի կարևոր մշակութային իրադարձությունների և միջոցառումների մասին տեղեկատվության փոխանակում | 2018-2020 թթ. | ՀՀ մշակույթի նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | հանրության իրազեկման բարձրացում |
| 45. | Պատմամշակութային ժառանգության պահպանության և օգտագործման ծրագրերի համատեղ մշակում ու իրականացում | 2018-2020 թթ. | ՀՀ մշակույթի նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | պատմամշակութային ժառանգության պատշաճ պահպանում |
| 46. | Սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում մշակութային ոլորտի միջոցառումների կազմակերպում, ինչպես նաև մարզական միջոցառումների անցկացում | 2018-2020 թթ. | ՀՀ մշակույթի նախարարություն<br><br>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | մշակութային և մարզական կապերի ակտիվացում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | | | ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | | |
| 47. | Ուսանողների մասնակցությամբ գիտա-կան, կրթական, պատմամշակութային «կլոր սեղանների» անցկացում վեբինարի միջոցով | 2018-2020 թթ. | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>ՀՀ մշակույթի նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ուսանողների մասնագիտական որակների բարելավում |
| 48. | Միջտարածաշրջանային մարզական միջոցառումներին մարզական պատվիրակությունների մասնակցու-թյան ապահովմանն աջակցություն | 2018-2020 թթ. | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | մարզական հաստատությունների միջև միջազգային համագործակցու-թյան ակտիվացում |
| ԳԼՈՒԽ 8.<br>ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ | | | | | |
| 49. | Հանրային առողջապահության ոլոր-տում համագործակցության զարգա-ցում, համատեղ հետազոտական ծրագրերի նախագծերի մշակում և իրականացում | 2018-2020 թթ. | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | հանրային առողջապահության ոլորտում համագործակցության զարգացում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 50. | Վրաստանին և Իրանի Իսլամական Հանրապետությանը սահմանամերձ Հայաստանի Հանրապետության տարածքներում բնակվող բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործում համագործակցության ծրագրի մշակում | 2018 թ. | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | Ֆինանսավորում չի պահանջվում: | սահմանամերձ տարածքներում բնակվող բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության ու սպասարկման որակի և հասանելիության բարելավում |
| 51. | Սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների բժշկական-կանխարգելիչ և առողջարանային հաստատությունների միջև համագործակցության զարգացում | 2018-2020 թթ. | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | բժշկական-կանխարգելիչ և առողջարանային հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում |
| 52. | Հանրային առողջապահության ոլորտում կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոնով պայմանավորված՝ միջազգային նշանակության արտակարգ իրավիճակների, ինչպես նաև արտակարգ իրավիճակի ներուժ ունեցող դեպքեր արձանագրելիս տեղեկատվության փոխանակում | 2018-2020 թթ. | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | հանրային առողջապահության ոլորտում կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոնով պայմանավորված՝ միջազգային նշանակության արտակարգ իրավիճակների արագ արձագանքման միջոցառումների կազմակերպում |
| 53. | Արտահանման, ներմուծման և տարանցման գործառնությունների ընթացքում պետական վերահսկողության և պետական սահմանի սանիտարահամաճարակային վերահսկողության ներքո գտնվող ապրանքների տեղափոխման համար սահմանային անցակետերի շահագործման արդյունավետության բարձրացման նպատակով համատեղ վերահսկողության իրականացում | 2018-2020 թթ. | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | սահմանային անցակետերի շահագործման արդյունավետության բարձրացում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 54. | Սահմանամերձ տարածքներում մարմնամարզության և առողջ ապրելակերպի համար նախատեսված հարթակների ստեղծում | 2018-2020 թթ. | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | սահմանամերձ տարածքներում առողջ ապրելակերպով զբաղվողների թվի ավելացում |
| 55. | Հանրային առողջապահական հիմնախնդիրների, արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման գործողությունների, անհետաձգելի բուժօգնության կազմակերպման, իրականացման և այլ հարցերի վերաբերյալ միջազգային համաժողովներին, սեմինարներին, դասընթացներին, վարժանքներին, գիտաժողովներին, համաժողովներին տեղական մասնագետների մասնակցության ապահովում | 2018-2020 թթ. | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | հանրային առողջապահական հիմնախնդիրների, արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման գործողությունների, անհետաձգելի բուժօգնության կազմակերպման, իրականացման և այլ հարցերի վերաբերյալ տեղական մասնագետների որակավորման բարձրացում |
| ԳԼՈՒԽ 9.<br>ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ | | | | | |
| 56. | Սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում սոցիալական բնակարանաշինության ոլորտում փորձի փոխանակում | 2018-2020 թթ. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>քաղաքաշինության կոմիտե<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | սոցիալական բնակարանաշինության որակի բարձրացում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 57. | Սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում զբաղվածության, աշխատանքային միգրացիայի, բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտում փորձի փոխանակում | 2018-2020 թթ. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայություն<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | աշխատանքի տեղավորման, աշխատանքային միգրացիայի, բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտում փորձի փոխանակման ապահովում |
| 58. | Գործազուրկներին սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում աշխատանքի տեղավորմանն աջակցության տրամադրում | 2018-2020 թթ. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում գործազուրկների թվի նվազեցում |
| 59. | ՀՀ սահմանային անցակետերում՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման մասին առկա տեղեկատվական նյութերի տարածում | 2018-2020 թթ. | ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br><br>ՀՀ ոստիկանություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | մարդկային թրաֆիքինգի և շահագործման երևույթի վերաբերյալ հանրային իրազեկման ապահովում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 60. | Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների և հատուկ դպրոցների երեխաների հետ աշխատող անձնակազմի համար երեխաների թրաֆիքինգի և շահա- գործման դեպքերի կանխարգելման, հայտնաբերման ու հատուկ կատե- գորիայի զոհերին աջակցության և պաշտպանության կազմակերպման վերաբերյալ դասընթացների կազմա- կերպում | 2018-2020 թթ. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | երեխաների թրաֆիքինգի և շահա- գործման դեպքերի կանխարգելման, հայտնաբերման ու հատուկ կատե- գորիայի զոհերին աջակցության և պաշտպանության վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում |
| 61. | Սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում ապօրինի միգրացիայի, ինչպես նաև ապօրինի աշխատանքային միգրացիայի կանխարգելման ու բացահայտման նպատակով միասնական միջոցառումների իրականացում | 2018-2020 թթ. | ՀՀ ազգային անվտան- գության ծառայություն<br><br>ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառա- վարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում ապօրինի միգրացիայի, ինչպես նաև ապօրինի աշխատանքային միգրացիայի կանխարգելման և բացա- հայտման դեպքերի թվի ավելացում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 62. | Սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում միգրանտներին աշխատանքային գործունեության մեջ ներգրավելու ընդհանուր սկզբունքների և մեխանիզմների միասնական ձևաչափի մշակում | 2018-2020 թթ. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայություն<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | միգրանտներին աշխատանքային գործունեության մեջ ներգրավելու պայմանների բարելավում |
| 63. | Սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում մարդկային թրաֆիքինգի երևույթի վերաբերյալ հանրային իրազեկման ապահովման նպատակով հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների հետ համագործակցությամբ տեղեկատվական քարոզարշավների կազմակերպում | 2018-2020 թթ. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն<br><br>ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>այլ շահագրգիռ պետական մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: | սահմանամերձ և համագործակցող վարչատարածքային միավորների տարածքներում մարդկային թրաֆիքինգի երևույթի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

822k.voroshum